Grant Thornton

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ

2014թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	6

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961
www.grantthornton.am

«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին

Մեր կողմից իրականացվել է «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի (Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը

Grant Thornton

մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

2015թ. մարտի 23

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն

Լիլիթ Արաբաջյան, FCCA

Առաջադրանքի ղեկավար

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	4,508	120
Հետաձգված հարկային ակտիվներ	5	1,092	-
		5,600	120
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		904	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	895	26,761
Մնացորդներ բանկերում		27,266	696
		29,065	27,457
Ընդամենը ակտիվներ		34,665	27,577
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7	39,029	6,572
Փոխառություններ կապակցված կողմերից	8	-	21,000
Եկամուտներին վերաբերող շնորհներ		5	5
		39,034	27,577
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		(4,369)	-
		(4,369)	-
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		34,665	27,577

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2015թ. մարտի 23-ին

Սոնա Կոշեցյան
Գործադիր տնօրեն

Գրիգոր Գաբրիելյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 6-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դպրոցի կառավարման և ուսումնական ծառայություններից հասույթ		142,554	26,678
		142,554	26,678
Փոխհատուցում աշխատակիցներին		(106,549)	(21,950)
Սննդի կազմակերպման ծախսեր		(15,691)	(4,629)
Ռոյալթիներ		(14,400)	-
Այլ ծախսեր	9	(11,375)	(99)
Վնաս մինչև հարկերը		(5,461)	-
Շահութահարկի գծով փոխհատուցում	10	1,092	-
Տարվա արդյունք		(4,369)	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(4,369)	-

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 6-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(4,369)	-
Ճշգրտումներ		
Մաշվածություն	479	6
Շահութահարկի գծով փոխհատուցում	(1,092)	-
Գործառնական շահույթ/(վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(4,982)	6
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	25,866	(26,762)
Պաշարների փոփոխություն	(904)	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	32,457	6,573
Շնորհների փոփոխություն	-	5
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	52,437	(20,178)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,867)	(126)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(4,867)	(126)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր	2,000	21,000
Փոխառությունների մարում	(23,000)	-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(21,000)	21,000
Բանկերում մնացորդների զուտ աճ	26,570	696
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	696	-
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	27,266	696

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 6-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: